№ 20. Կիրակի, յուլիսի 24—1866. № 20.

# ՎԱՃԱՌԱԿԱՆ

## Թիֆլիսի առեւտրական գազէթ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յանվարը քաղաքումս՝ 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Դիստերվէգը և հիմնական դաստիարակութեան ուղղութիւնը: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւններ:

### ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻՑ.

«Վաճառականի» խմբագրութիւնը յայտնում է, որ էս տարի յուլիսի 1-ից սկսած, բացի 10 ամսով ստորագրվիլը, ընդունում է նմանապէս և 6 ամսով ստորագրութիւն մինչև դեկտեմբերի վերջը: Էդ վեց ամսի համար գինը նշանակվում է Թիֆլիսումը՝ 1 մ. 50 կ. , իսկ քաղաքիցը դուրսը՝ 2 մ.

Դեռ էլի շարունակվում է «Վաճառականի» համար ստորագրութիւնը առաջին №-ից էս գազեթի ճակատումը յայտնած գներով:

### ԹԻՖԼԻՍ

յուլիսի 23-1866.

Հերու, հոկտեմբերի 29-ին կատարվեցաւ Դիստերվէգի 75-դ տարեդարձը Գերմանիայումը. Թէ ով է Դիստերվէգը և ինչի համար է նրան էդպիսի պատիւ տալը—կասենք կարճ, որ Գերմանացի Ադոլֆ Դիստերվէգը հիմնական դաստիարակների և դաստիարակութեանի գլուխն է, համարեա թէ 40 տարի դա աշխատել է ուսումնարանները ազատելու բոլոր օտար ազդեցութիւններից, վարժապետների հասարակական և նիւթական վիճակը ապահովելու և ողջամիտ դաստիարակութեան և կրթութեան համար: Թէպէտ էս ուղղութիւնը Դիստերվէգի շատ հալածանքների պատճառ դառաւ, բայց մի և նոյն ժամանակը խորը տպաւորութիւն արաւ բոլոր դաստիարակութեան գործը սիրողների վրայ: Էս վերջին տարեդարձին մանաւանդ Գերմանիայի ամեն կողմերից շնորհաւորութիւններ ստացվեցան տելեգրաֆով Դիստերվէգի անունով:

Էս անգամով հարկաւոր ենք համարում Դիստերվէգի ուղղութիւնը աւելի պարզ բացատրելու համար թարգմանել էն նամակը, որ նա գրել է հերու նոյեմբերի 8-ին Բերլինիցը իրա բոլոր շնորհաւորողներին և ուրեմն համախոհներին:

«Երկու սեռի ուսուցիչների և դաստիարակների հոկտեմբերի 29-ին ինձ յայտնած շատ լաւ և բարի բաները ու ցանկութիւնները զարթեցրին իմ մէջը խորը շնորհակալութեան զգացմունք դէպի ձեզ: Ես կցանկայի մօտ գնալ իմ բոլոր բարեկամներին և երեսերես յայտնել իմ հոգուց բղխած շնորհակալութիւնը, բայց անկարող եմ էդ բանն անելու: Իմ շնորհակալութիւնը յայտնելու հետ կամենում եմ բացատրել և էն պատճառը, որ ստիպել է ձեզ ուղարկել դէպ ի ինձ ձեր շնորհաւորութիւնները:

Կրթութիւնը, ուրեմն և ուսումնարանը, ինչպէս վաղ էլ ասում էին, պէտք է աչքի առաջն ունենան կեանքը և պատրաստել աշակերտին կեանքի համար:

Էս կարծիքը, որ բոլորն ընդունել են, մանաւանդ հիմի, իմ կարծիքով, մեր ժամանակներումը մէկ առանձին նշանակութիւն է ստացել: Մեր ժամանակի յատկութիւնն է՝ աշխատանք, շարժողութիւն, ամենքը դիմում են դէպ ի լաւ վիճակը, աւելի յարմարաւոր կեանքի միջոցներ գտնելու. բոլորն ունեն բարձր նպատակներ: Մէկ խօսքով ամենքը բացվում են, դիմում են դէպ ի կատարելագործութիւնը: Մեր ժամանակվան մարդիկը կատարելագործում են իրանց նիւթական և բարոյական կողմերը, դիմում են դէպ ի էդ նպատակը, ուրեմն բոլորն էլ բացվելու վրայ են, որովհետև բացվելու համար հարկաւոր է էդ նպատակին դիմելը: Նրանք զգում են ազատ բացվելու իրաւունքը հեռացնում են բոլոր խանգարող պատճառները, միջոցներ են գտնում իրանց աւելի և աւելի կատարելագործվելու:

Ահա մեր ժամանակի բուն խորհուրդը, ինչպէս որ ես հասկանում եմ, էս է՝ մենք դիմում ենք դէպ ի գործունէութիւնը և ազատաբար բացվիլը, որովհետև էդ բաները մարդու անձնական ինքնաճանաչութեանի իրաւունքի հետևանքներ են: Ի հարկէ անձնական ինքնաճանաչութեանի հետ կապված են և ուրիշների իրաւունքը և բարոյական կանոնները:

Էս նպատակի յարմար պէտք է պատրաստել ուսանողներին, էդ ուղղութիւնը պէտք է լինի բոլոր էն ուսումնարանների նպատակը, որոնք կեանքի համար են մարդիկ պատրաստում: Ուրեմն դաստիարակի նպատակն է՝ աշակերտի ազատ բացվիլը, որ յարմար է մարդու բնաւորութեանին և որով մարդը ընդունակ է դառնում ինքնաճանաչ լինելու: Էս ներքին բացվելու կանոնների քննելը դաստիարակի անդադար նպատակը պէտք է լինի: Էդուր համար էլ բոլոր կարգադրութիւնները, կանոնները, միջոցները և հնարները պէտք է համապատասխանեն էս նպատակին: Էդ նպատակին յարմարացրած պէտք է նշանակվեն դաս տալու առարկաները: Էն առարկան, որ կարող է նպատակի հասնելուն

խանգարել, պէտք է հեռացնել ուսումնարանից։ Ուսուցանելու ձևը պէտք է նմանապէս յարմարացրած լինի նպատակին, ինչպէս պէտք է լինի դաստիարակութիւնը, որ իւրաքանչիւր աշակերտի մէջ զարթի ներքին բացվելու հոգին, պատրաստէլի ուրախալի և ազատ գործունէութեան համար և էգոիսով հասած յառաջադիմութիւնը վայելելով քաղցրանայ նրա համար գործունէութիւնը և մտքի բացվիլը։ Մէկ խօսքով էնպէս պէտք է անել, որ մտքի բացվիլը դառնայ երեխայի բնաւորութեան հիմը։

Պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ մինչև հիմի չէ էլել դեռ էնպիսի ազգ,որի բոլոր անդամները մտքի բացվելու վրայ լինին։ Բայց ամէնքը գիտեն, որ ազգի ազատաբար ինքնաճանաչութեան համար հարկաւոր է, որ ամէն մէկ մասնաւոր՝ անձը հասկանայ էդ բանը։ Մասնաւորների նպատակին հասնելը ընդհանուրի բարօրութեան հիմն է։ Եւ երբ որ ողջ ազգը հասնի քաղաքակրթութեան վերին աստիճանին, էն ժամանակը ոչինչ բան չի կարող խլել կամ ճնշել ազգի ազատ իրաւունքները և ինքնաճանաչութիւնը։

Ուսումնարանը պէտք է հետևի բարի ցանկութիւններին և կեանքի օգնող շարժողութիւններին։ Բայց ուսումնարանը կարող է ոչ թէ միայն հետևիլ էդ ցանկութիւններին, այլ և նրանց 'առաջը կտրել։ Նոր ժամանակներումս ուսումնարանը կեանքի առաջը կտրեց։

Հիմիկվան վարժապետներից և դաստիարակներից պէտք է պահանջել, որ նրանք ունենան բարի ցանկութիւններ բոլոր իրանց աշակերտների ազատ բացվելու և կատարելագործվելու համար և գործ կատարեն իրանց կողմից էս նպատակին յարմար։

Ի՞նչը սովրեց ձեզ, պատուելի բարեկամներ ինձ միտը բերելու։ Հնացած ուսուցանելու առարկաների գնահատելը, որոնք աշակերտի բացվելու խանգարողներն են և ամենահարկաւոր միտքը բաց անող առարկաների գնահատելը և զարթեցնող ուսուցանելու ձևի տարածելը—մէկ խօսքով ազատ բացվելու միջոցի և նպատակի նմանութեան հասկանալը սովրեցին ձեզ, սիրելի համախոհներ, մինչև էս տարի էլ նոյեմբերի 29-ը։

Մինչև հասարակական կարծիքը և ժողովրդի կամեցողութիւնը ազգային ուսումնարանների ծաղկեցնելու կողմը չլինի, շատ տեղերումը ուսումնարանները կգտնվեն հիմիկվան չքաւոր և սորկական վիճակումը և չեն ազատվի էն ցածացնող հոգաբարձութենից, որ արգելում է երեխասարդներին ազատ բացվել և հաստատ բնաւորութեան տէր դառնալ։

Առանց ազգային լուսաւորութեան, առանց ազատ ժողովրդական կրթութեան անկարելի է և անհաստատ է մտքի բացվիլը։ Երբ որ ազգային ուսումնարանները չեն բաց անի երեխայի միտքը ազատաբար, չի կարող լինել ժողովրդական լուսաւորութիւն։

Ահա էն հիմքերը, որոնց վրայ հաստատ կանգնած են Գերմանիայի ուսուցիչները։

Կատարենք ամէն մէկս մեր պարտաւորութիւնները։ Դիմենք սիրով դէպ ի նպատակը մինչև մեր մահը։ Ես էլ էդ նախագիծներին յարմար մտադիր եմ շարունակել, որքան ժամանակ էլ Աստուած ինձ կթողնէ, իմ հրատարակութիւնները՝ «Դաստիարակութեան ժողովածուն» և Րէյնեան թերթերը»։ Ողջոյն և շնորհակալութիւն։»

Բայց աւելացնում ենք էստեղ, որ էս խօսքերը ասելուց յետոյ, երկար չթողեց Աստուած Դիստերվեգին իր գործը շարունակելու։ Սա վախճանվեցաւ Բերլինումը էս տարի յունիսի 25-ին 75 տարեկան հասակումը։

---

## ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

**Պատերազմը և հրէաները։** Թէպէտ մանաւանդ մեծ պատերազմների ժամանակը, ինչպէս վերջին Ամերիկայի պատերազմի ժամանակը տէրութիւնները, ազգերը և մասնաւոր մարդիկը խղճանում են և նեղանում, բայց էդուրից չէ հետևում է թէ փողը կործանվում է անդունդի մէջ—չէ, այլ փողերը էդ ժամանակները ուրիշ տէրեր են ճարում— էդ տէրերն են մեծ մասով հրէաները։ Ռոդշիլդները իրանց հարստութեան մեծ մասը ժողովեցին Ֆրանսիայի պատերազմի ժամանակը և մանաւանդ 1815 թւին։ Ինչպէս որ ագռաւները շուտով գէշի հոտն առած մօտ են լինում նրա վրայ ամէն կողմերից, էնպէս էլ պատերազմի հոտն առած հրէաները ժողովվում են պատերազմող երկիրներումը։ Հիմի աշխարհիս ամէն կողմերիցը ժողովվել են Բերլինումը հրէաներ։ Այժմեան յայտնի հարուստ հրէաների կարողութիւնը հասնում է 30 միլիարդ ֆրանկին։

**Պարիժի տիեզերական աշխարհահանդիսի մասին։** Զնայելով որ 1867 թւին խաղաղութիւն լինի Եւրոպայումը, կամ թէ շարունակվի հիմիկվան պատերազմը և կամ մէկ ուրիշ նոր պատերազմ բաց լինի, անպատճառ Պարիժի տիեզերական աշխարհահանդէսը պէտք է բաց լինի 1867 թւի ապրիլի 1-ին։ Էս բանը վճռել է էս տարի Պարիժի կայսերական կոմիսիան մայիսի 12-ին։ Յայտնի է, որ 1855 թւի Պարիժի տիեզերական աշխարհահանդէսը Ղրիմի պատերազմի սաստիկ ժամանակն էր և բոլորովին յաջող դուրս եկաւ։ Հիմի ամէն բան էնպէս է կարգադրած, որ ինչ որ կուզէ պատահի, 1867 թւի աշխարհահանդիսի փառաւորութիւնը պէտք է 19-դ դարի գեղեցիկ զարդը դառնայ։

**Էս տարվան Կովկասեան ծախսով ուղարկած աշակերտները։** Կովկասեան ուսումնարանների գլխաւոր տեսուչը յայտնում է, որ Մեծ Իշխան Կովկասեան փոխարքայի բարեհաճութեամբ Կովկասեան ծախսով պէտք է ուղարկվեն սովրելու՝ Կոնստանտինեան մեժեվոյ ինստիտուտը՝ չորս հոգի, որոնցից մէկը, կոլեժսկի ասեսորի որդի Սարգիս Բահադուրեանցը հայ է։ Պետրովեան երկրագործական Ակադեմիան ուղարկվում են Թիֆլիսի գիմնազիայումը ուսման ընթացքն աւարտած 9 հոգի, որոնցից 1.) Արշակ Տէր-Յովսէփեանցը, 2.) Դաւիթ Փիրումեանցը, 3.) Միքայէլ Հէջուբեանցը և 4.) Ստեփան Խօջայեանցը հայ են։ Մոսկովի կայսերական համալսարանը ուղարկվելու 7 հոգուց մէկը, Թիֆլիսի գիմնազիայումն ուսման ընթացքն աւարտող, Ջաւաթ Իշխանեանցը հայ է։

**Մոզդոկ և Գէօրգիեվսկ քաղաքների տօնավաճառները (եարմունկաները)։** Էս տարի ապրիլի 23-ից սկսվեցաւ և ապրիլի 30-ին վերջացաւ Մոզդոկ քաղաքի տօնավաճառը։ Բերվեցաւ էդտեղ զանազան ապրանքներ, տաւար և ձիաներ 57,700 մանեթի, որոնցից 26,175 մանեթինը ծախվեցաւ։ Էդ տօնավաճառումը 6000 մարդ է էլել։

Գէօրգիեվսկի տօնավաճառը սկսվեցաւ մայիսի 9-ին և շարունակվեցաւ մինչև մայիսի 12-ը։ Էդտեղ բերվեցաւ զանազան ապրանքներ, տաւար և ձիաներ 220,239 մանէթի, որոնցից 169,200 մանէթինը ծախվեցաւ։ Էդտեղ ժողովվել էր Ռուսաստանի զանազան քաղաքներից մօտ 25,000 մարդ։

**Ս. Էջմիածնի Կաթողիկոսի տեղապահը Թիֆլիսում։** Էս ամսի 22 ին, ուրբաթ օրը եկաւ Թիֆլիս Նորին Բարձր Սրբազնութիւն Ս. Էջմիածնի Կաթողիկոսի տեղապահ, Ատրպատական հայոց առաջնորդ Գէորք Արքեպիսկոպոս Վեհա-

| | | | |
|---|---|---|---|
| 122 | 36 | 12,118 | 36 |
| 11,299 | 40 | 13,362 | 30 |
| 19,451 | 26 | 8,780 | 11 |
| 15,899 | 35 | 1,737 | 49 |
| 4,287 | 37 | 4,310 | 42 |
| 13,192 | 9 | 208 | 1 |
| 4,902 | 12 | 16,258 | 2 |
| 3,571 | 36 | 14,711 | 22 |
| 5,537 | 23 | 8,730 | 46 |
| 9,593 | 44 | 17,879 | 34 |
| 10,432 | 31 | 10,081 | 15 |
| 16,552 | 39 | | |
| 17,836 | 19 | 5,707 | 37 |
| 1,730 | 10 | 5,249 | 40 |
| 9,022 | 35 | 10,382 | 32 |
| 1,554 | 49 | 12,156 | 43 |
| 10,244 | 39 | 3.096 | 40 |
| 1,062 | 40 | 10,451 | 33 |
| 1,892 | 6 | 11,528 | 31 |
| 5,324 | 33 | 4,977 | 39 |
| 15,832 | 43 | 4,616 | 2 |
| 9,487 | 35 | 19,817 | 19 |
| 16,652 | 26 | 19,111 | 38 |
| 7,378 | 11 | 17,639 | 31 |
| 9,187 | 20 | 19,971 | 29 |
| 15,283 | 44 | 18,167 | 15 |
| 8,297 | 24 | 18,277 | 6 |
| 4,112 | 39 | 17,389 | 31 |
| 6,774 | 42 | 3,376 | 20 |
| 10,179 | 32 | 18,921 | 12 |
| 15,461 | 17 | 8,808 | 48 |
| 14,954 | 8 | 4,576 | 19 |
| 15,642 | 24 | 4,865 | 48 |
| 19,560 | 36 | 17,194 | 40 |
| 19,790 | 10 | 13,601 | 15 |
| 5,337 | 9 | 413 | 3 |
| 3,827 | 7 | 17,052 | 7 |
| 9,001 | 39 | 9,991 | 31 |
| 17,450 | 28 | 15,025 | 3 |
| 13,959 | 27 | 19,912 | 26 |
| 1,838 | 28 | 2,266 | 21 |
| 9,705 | 19 | 14,525 | 4 |
| 4,117 | 2 | 12,656 | 4 |
| 17,891 | 34 | 16,467 | 17 |
| 13,378 | 49 | 13,815 | 11 |
| 17,856 | 3 | 3,272 | 33 |
| 11,576 | 9 | 855 | 33 |
| 16,873 | 43 | 3,094 | 47 |
| 7,746 | 38 | 18,680 | 38 |
| 13,574 | 5 | 8,449 | 5 |
| 7,397 | 44 | 19,228 | 8 |
| 8,834 | 1 | 8,491 | 8 |
| 112 | 11 | 8,379 | 50 |
| 4,736 | 23 | 4,357 | 37 |
| 16,629 | 42 | 4,498 | 5 |

| | | | |
|---|---|---|---|
| 19,627 | 21 | 11,873 | 19 |
| 19,233 | 21 | 75 | 35 |
| 12,185 | 19 | 17,140 | 44 |
| 97,732 | 48 | 18,390 | 35 |
| 16,510 | 12 | 4,352 | 4 |
| 16,873 | 34 | 13,073 | 10 |
| 1,444 | 41 | 10,323 | 26 |
| 12,069 | 2 | 3,696 | 41 |
| 2,509 | 45 | 11,475 | 15 |
| 9,676 | 14 | 4,604 | 16 |

Էս տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ աւելորդ չենք համարում կրկնել, (թէպէտ «Վաճառականի» 11 №ումը տպել էինք) որ Թիֆլիսումը բացված է արդէն Թագաւորական բանկի բաժանումը, (отдѣленіе государственнаго банка), որտեղ կատարվում են էս տոմսակների մասին բոլոր պահանջմունքները։

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Լօնդոն յուլիսի 6

Վեկսիլի կուրսը Պետերբուրգի վրայ 25 ¾ պէնս։ Դիսկօնտը 9 %։

Բամբակի առուտուրը միևնոյնն է, գների փոփոխութիւն չկայ։

Բերլին յուլիսի 6.

Բանկը իր դիսկօնտը ցածացրեց մինչև 7%.

Լիօն յուլիսի 4։

Ապրեշումի բերքը թէ և շատ լաւ է, բայց պատերազմների պատճառով Մարսիլիայում դեռ օրինաւոր առուտուր չէ սկսվել. մանր ծախս են անում միայն փոքր հարկաւորութիւն ունեցողները։

Պետերբուրգ յուլիսի 9.

Կուրսերը Լօնդոնի վրայ 28 պէնս։
Պարիժի վրայ . . . 289 սանտիմ

5% Լատարէյով առաջին փոխառութենի տոմսակների գները բարձրացան 108¼ մանէթից մինչև 109 մ.

5% Լատարեայով երկրորդ փոխառութենի տոմսակների գները բարձրացան 105½ մանէթից մինչև 106 մ.

Ոսկին . . . . . . . . . 7 մ. 22 կ։

Բիրժայումն ամենևին փող չկայ։

Դիսկօնտը . . . . . . . . . 7%

Մնծաարծաթը . . . . . . . 35%.

Թիֆլիս յուլիսի 23

Թիֆլիսի Թագաւորական բանկի բաժանումը ծախում է երկրորդ 5% լատարէյով ներքին փոխառութենի տոմսակները 106 ½ մ։

Բանկի բաժանումը Մոսկով և Մակարիայ բարաթ է անում հազարին 2 մ։

Բամբակ էս շաբթի սկզբին ծախվեցաւ 200 հակ Երևանու 11 մ. 65 կ., Պարսկաստանինը արժէ մօտ 12 մ, էսօրվան գինն է 11 մ. 50 կ. փթին։

Ապրեշումի մասին վերջին փոստայով գրում են Նուխուց, որ էստարվայ բերքը անցեալ տարվայ չափ է. 15 օր է, ինչոր սկսվել է առուտուրը գները շատ բարձր են, փթին 240 մանէթից մինչև 280 մ։ Պարսկաստանումը էս տարվայ բերքը հերվանից կիսով չափ պակաս է։

Բուրդը Գանջու և Թարաքամի 4 մ.
20 կոպէկից սկսած, Թուշինը 7 մ.
Ինգլիզու շաքարը . . . 10 մ.
Ոսինը . . . . 11 մ 30 կ.
Արծաթը 72 պրօբի . . . 85 մ.
— —84 պրօբի . . . 310 մ.
Ոսկին . . . . . . . 7 մ.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Դուրս եկաւ Գ. Տ. Ա.-ի և Ս. Ե. ի աշխատասիրած ռուսերէն Պաւլսօնի գրքին յարմարացրած «ընթերցարան հայ երեխաների համար», որ պարունակում է ութածալ 97 երես։ Ծախվում է «Վաճառականի» խմբագրատանը։ Գինը հատով առնողների համար 40 կ. է, իսկ գումարով առնողների համար՝ 35 կոպ։

Էս գրքից ծախվում է Թիֆլիսումը նմանապէս գրավաճառ պ. Ա. Էնֆիաճեանցի մագազինումը և Քեալեան գիմնազիայումը պ. Սողոմոն Վարդանեանցի մօտ։

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ
Іюля 24-го 1866 г.

Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.
ՏՊԱՐԱՆՈՒՄԸ։

Խմբագրող եւ հրատարակիչ
Գ. Տէր Աղէքսանդրեանց։